ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/76

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ
Երրորդ անձ՝ «Պրոթերմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Վ. Գասպարյանի
«Պրոթերմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Է. Չատինյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, «ՀԱԷԿ-ի ՇՊ-3-րդ և 4-րդ շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին մակերևույթների հակակոռոզիոն շերտապատում՝ հակադարձ փականներից մինչև թիվ 2 հովացման աշտարակի հորանը» ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝

Ընկերություն) կողմից 29.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 26.04.2022թ.-ի թիվ 2 արձանագրությունը և «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 29.04.2022թ.-ին:

02.05.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/76 համարի ծածկագիրը:

05.05.2022թ.-ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Պրոթերմ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

05.05.2022թ.-ին, 11.05.2022թ.-ին և 13.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.05.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.05.2022թ.-ին:

2. <u>«Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ն 29.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.04.2022 թվականի թիվ 2 արձանագրությունը, դադարեցնելու և հանձնաժողովին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գնահատող հանձնաժողովը /այսուհետ նաև՝ հանձնաժողով/ հրապարակել է հրավեր և հայտարարություն՝ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22 ծածկագրով, «ՀԱԷԿ» ՓԲԸ ՇՊ-3, 4 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին մակերևույթների հակակոռոզիոն շերտապատում՝ հակադարձ փականներից մինչև №2 հովացման աշտարակի հորանը» ծառայության ձեռքբերման նպատակով /այսուհետ նաև՝ հրավեր/:

2. Անհատ ձեռնարկատեր Վոլոդյա Արազի Բաղդասարյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) ներկայացրել է հայտ և մասնակցել է հանձնաժողովի կողմից հայտարարված բաց մրցույթին:

3. Բողոքաբերի փաստաթղթերը ներկայացվել են լիազորված անձի՝ Հակոբ Մինասյանի կողմից, ով փաստաթղթերը հաստատել է էլեկտրոնային ստորագրությամբ:

4. 26 ապրիլի 2022թ.-ին գնահատող հանձնաժողովի բացման նիստի թիվ 2 արձանագրության (այսուհետ նաև՝ արձանագրություն) 6-րդ կետով արձանագրվել է, որ հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը բավարար է (լիազորությունները ճանաչել է):

5. Բողոքաբերը գնային առաջարկով առաջարկել է ամենացածր գինը և պետք է զբաղեցներ առաջին տեղը:

6. Արձանագրության համաձայն հանձնաժողովը որոշել է մերժել Բողոքաբերի հայտը, արձանագրելով հետևյալը. «Վոլոդյա Բաղդասարյանի Արազի Ա/Ձ-ն մասնակցության հայտի հավելվածում ստորագրել է որպես Վոլոդյա Բաղդասարյանի Արազի Ա/Ձ տնօրեն (...) լիազորագիրը կազմված է ՀՀ օրենքին անհամապատասխան, մասնավորապես լիազորագրի մեջ ևս նշված է Վոլոդյա Բաղդասարյանի Արազի Ա/Ձ տնօրեն, ինչպես նաև լիազորագրի հետ ներկայացված չէ անձը հաստատող փաստաթուղթ (...) նշված կետերից հետևում է, որ լիազորագիրը ևս շտկման ենթակա փաստաթույթ չէ»:

7. Արձանագրությամբ հանձնաժողովը բողոքաբերի մասնակցության հայտը ենթակա է մերժման՝ լիազորագիրը ևս շտկման ենթակա փաստաթուղթ չլինելու հիմքով:

8. Ընտրված մասնակից է ճանաչվել «Պրոթերթմ» ՍՊԸ-ն:

9. Նիստերի ձայնագրություն չի իրականացվել:

Գտնում ենք, որ բողոքն ակնհայտ հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն.

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց

ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով փարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ, կետի համաձայն. « 1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «2. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ»:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 40-րդ կետի համաձայն. «Հայտերի բացման և գնահատման նիստում՝

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների,

աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,»:

Տվյալ դեպքում հանձնաժողովը որոշել է մերժել Բողոքաբերի հայտը, արձանագրելով, որ լիազորագիրը կազմված է ՀՀ օրենքին անհամապատասխան, մասնավորապես լիազորագրի մեջ ևս նշված է Վոլոդյա Բաղդասարյանի Արազի Ա/Ձ տնօրեն, ինչպես նաև լիազորագրի հետ ներկայացված չէ անձը հաստատող փաստաթուղթ (...) նշված կետերից հետևում է, որ լիազորագիրը ևս շտկման ենթակա փաստաթույթ չէ և հողում է կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար:»:

Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը հակասել է ինքն իրեն, քանի որ նախ 26 ապրիլի 2022թ.-ի արձանագրության 6-րդ կետով հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը բավարար գնահատելով արդեն իսկ լիազորությունները ճանաչել է Բողոքաբերի, որից հետո առհասարակ իրավունք չուներ անդրադառնալ այդ հանգամանքին:

Հարկ եմ համարում արձանագրել, որ Բողոքաբերը շտկելու հարց չի բարձրացրել և նրա հայտը շտելու անհրաժեշտություն առկա չէ: Լիազորագիրը պատշաճ է, քանի որ դրա բովանդակության մեկնաբանման արդյունքում պարզ է դառնում, որ Վոլոդյա Արազի Բաղդասարյան անհատ ձեռնարկատերը լիազորել է Հակոբ Մինասյանին և փաստաթղթերը

ներկայացվել են լիազորված անձի՝ Հակոբ Մինասյանի կողմից, ով փաստաթղթերը հաստատել է էլեկտրոնային ստորագրությամբ և էլեկտրոնային ստորագրության պայմաններում անձը արդեն իսկ ճշտված է, իսկ տվյալ դեպքում էլեկտրոնային ստարագրության անվավերության հարց հանձնաժողովը չի բարձրացրել: Ավելին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետին հղում կատարելով գնահատող հանձնաժողովի համար պարզ պետք է լիներ, որ նշված նորմով պահանջվող փաստաթուղթը լիազորագիրն է միայն:

Ինչ վերաբերում է հանձնաժողովի այն փաստարկին, որ Վոլոդյա Բաղդասարյանի Արազի Ա/Ձ-ն մասնակցության հայտի հավելվածում ստորագրել է որպես Վոլոդյա Բաղդասարյանի Արազի Ա/Ձ տնօրեն, ապա հենց իր կողմից նշվել է, որ Վոլոդյա Բաղդասարյանի Արազի Ա/Ձ-ն է մասնակցության հայտի հավելվածը ստորագրել, այսինքն՝ ընդունել է հենց մասնակցի ստորագրման փաստը:

Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ գնումների հետ կախված բողոքներ քննող անձի որոշման իրավաչափությունը ստուգելու գործի շրջանակներում իմ կողմից ներկայացված բողոքը բավարարել է և տվել ուղղորդող նախադեպային մեկնաբանություն գնումների հետ կապված փաստաթղթերի բովանդակության մեկնաբանման հետ կապված և նշել, որ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ Վերաքննիչ դատարանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը պետք է մեկնաբաներ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի կանոններով (Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:)՝ բացահայտելով օրենսդրի նպատակը, իսկ Հիմնադրամի հրավերի, Ընկերության հայտի, բանկի կողմից տրված երաշխիքի բովանդակությունը պետք է բացահայտեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի կանոններով՝ այդ թվում գնահատելով բանկի կողմից հետագայում տրված գրությունները (որոնք կարող էին բացահայտել երաշխիքի պայմանագիրը կնքելիս կողմերի իրական կամքը) (տե՛ս «Եղեգնաձոր ՃՇՇ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Վահագն Գասպարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.02.2019 թվականի

որոշման դեմ՝ ըստ հայցի «Եղեգնաձոր ՃՇՇ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, երրորդ անձինք՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, «Ա.Ա.Բ. Պրոեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ՝ գնումների հետ կապված բողոքը բավարարելու մասով որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/12436/02/18 գործով 2021 թվականի հոկտեմբերի 22-ի որոշում) :

Տվյալ դեպքում լիազորագրի բովանդակությունը հանձնաժողովը պետք է բացահայտեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի կանոններով, որից հետո կհասկանար, որ ընդհամենը «տնօրեն» բառի ավել նշվելը դեռևս բավարար չէ լիազորությունները չճանաչելու համար, քանի որ միակողմանի գործարքի՝ լիազորագրի ստորագրության հատվածում անգամ ստորագրել է հենց Վոլոդյա Արազի Բաղդասարյան անհատ ձեռնարկատերը, ինչը նշանակում է, որ չի կարող այլ կերպ մեկնաբանվել և կամայականորեն գնահատվել ներկայացված փաստաթուղթը:

Կարգի 26-րդ կետի համաձայն. « (…) Գնահատող հանձնաժողովի՝

5) նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է.»:

Տվյալ դեպքում վերը նշված նորմերով սահմանված է, որ ի թիվս այլ նիստերի հայտերի բացման, գնահատման նիստը պետք է ձայնագրվի և ընթացքը հիմնավորվի ձայնագրությամբ. սույն դեպքում այնքանով է էական, որ լիազորությունների ճանաչման հարցը ինչ կարգով է քննարկվել և մի դեպքում ընդունվել, մյուս դեպքում ոչ:

Ինչ վերաբերում է լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի չներկայացնելուն, ապա հանձնաժողովը կարող էր կասեցնել և մեկ աշխատանքային օր տրամադրել մասնակցին այն ներկայացնելու համար, թեև դրանով չէր կարող կանխորոշվել ընտրված մասնակից ճանաչելու հարցը:

Նման պայմաններում կարող ենք ասել, որ մրցույթի թիվ 2 արձանագրությունը ենթակա է դադարեցման և Բողոքաբերին ընտրված մասնակից ճանաչման:»:

Ելնելով վերոգրյալից, «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 26.04.2022թ.-ի թիվ 2

արձանագրությունը և «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.05.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/7772-2022 գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի կողմից 29.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 04.05.2022թ.-ին թիվ Ե/40/1012-22 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ, տրամադրելով բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Վոլոդյա Արագի Բաղդասարյան անհատ ձեռնարկատիրոջ բողոքի քննության նպատակով Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) գրավոր դիրքորոշումը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «ՀԱԷԿ-ի ՇՊ 3, 4 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին մակերևույթների հակակոռոզիոն շերտապատում հակադարձ փականներից մինչև N92 հովացման աշտարակի հորանը» ծառայության ձեռք բերման նպատակով ս/թ ապրիլի 8-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ՝ ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև բողոքաբեր Վոլոդյա Արագի Բաղդասարյան Ա/Ձ-ն:

Մասնակցության հայտերի գնահատման ժամանակ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Վոլոդյա Արագի Բաղդասարյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտի հավելվածներում, ինչպես նաև կից լիազորագրում արձանագրել է

մի շարք անհամապատասխանություններ ընթացակարգի հրավերին և ՀՀ օրենսդրությանը: Մասնավորապես՝

Մասնակցության հայտի հավելվածների՝ ներառյալ հավելված 2-ի (գնային առաջարկ), ստորագրության հատվածում նշված է «Վոլոդյա Արագի Բաղդասարյան Ա/Ձ տնօրեն»,

Մասնակցության հայտին կից ներկայացված լիազորագրի մեջ նշված է Վոլոդյա Արագի Բաղդասարյան Ա/Ձ-ն ի դեմս տնօրեն Վոլոդյա Բաղդասարյանի լիազորում է...: Լիազորագրին կից ներկայացված չէ անձը հաստատող փաստաթուղթ:

Գնահատող հանձնաժողովը որոշում կայացնելիս առաջնորդվել է հետևյալ դրույթներով.

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված, որով սահմանվում է «Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է»: Սույն դրույթից հետևում է, որ անհատ ձեռնարկատերը չի կարող ունենալ տնօրեն, որից բխում է, որ Վոլոդյա Արագի Բաղդասարյան Ա/Ձ տնօրենը իրականում գոյություն չունեցող անձ է (պաշտոն է):

ՀՀ Կառավարության առ 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետը, որից հետևում է, որ գնային առաջարկում արձանագրված սխալը (Վոլոդյա Արագի Բաղդասարյան Ա/Ձ տնօրենը) շտկման ենթակա չէ (նշված բացառություններում առկա չէ արձանագրված տարբերակը):

Լիազորագիրը կազմված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքին անհամապատասխան: Մասնավորապես՝ լիազորագրի մեջ նշված է «Վոլոդյա Բաղդասարյան Արագի Ա/Ձ-ն ի դեմս տնօրենը Վոլոդյա Բաղդասարյանի լիազորում է ...», իսկ ստորագրության հատվածում նշված է Վոլոդյա Արագի Բաղդասարյան Ա/Ձ: Անհասկանալի է լիազորագիրը տրված է Վոլոդյա Արագի Բաղդասարյան Ա/Ձ-ի, Վոլոդյա Արագի Բաղդասարյան Ա/Ձ տնօրենի, թե Վոլոդյա Բաղդասարյանի կողմից:

Լիազորագրով Հակոբ Միասյանը լիազորվել է Վոլոդյա Բաղդասարյանի անունից ստորագրել փաստաթղթեր (սակայն նշված չէ ինչ փաստաթղթեր), կնքել պայմանագրեր, ինչպես նաև կատարելու անհրաժեշտ բոլոր գործողությունները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով գնանշման հարցման համար:

Հանձնաժողովը արձանագրեց, որ լիազորագրով հստակեցված չէ թե «բոլոր գործողություններ» եզրույթը ինչ է իր մեջ պարունակում: Արդյոք լիազորված անձը իրավունք ուներ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատել մասնակցության հայտի հավելվածները (նկատենք որ լիազորագրով տրված է իրավունք ստորագրել փաստաթուղթ այլ ոչ թե էլեկտրոնային ստորագրությամբ, բացի այդ առանձնացված է սույն ընթացակարգի շրջանակներում կատարվող գործողությունները ստորագրության իրավունքից):

Բողոքաբերի այն պնդմանը, որ հանձնաժողովը պետք է պարզեր լիազորագրով տրված լիազորությունների շրջանակը, նշեմ որ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ գնահատող հանձնաժողովը նշված լիազորություններով օժտված չէ: Ավելին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է հայտը ներառող փաստաթղթերի ցանկը (որոնց մեջ լիազորագիրը առկա չէ), իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է որ դրանք ստորագրում է ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորած անձը՝ կից ներկայացնելով նաև լիազորագիրը: ՀՀ Կառավարության առ 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետով սահմանվում է, որ «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի ահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը» նշված կետերից հետևում է, որ լիազորագիրը ևս շտկման ենթակա փաստաթուղթ չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշում կայացրեց անբավարար գնահատել և մերժել Վոլոդյա Բաղդասարյան Արագի Ա/Ձ մասնակցության հայտը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ բողոքաբեր անձի բողոքը անհիմն է, քանի որ գնահատող հանձնաժողովը գործել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված նորմերով՝ ապահովելով գնման գործընթացի մրցակցային, համաչափ և ոչ խտրական կազմակերպումը:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Պրոթերմ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Պրոթերմ» ՍՊԸ-ն 05.05.2022թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին՝ գրավոր կերպով ներկայացնելով իր դիրքորոշումն ու առարկությունները բողոքի հիմքերի ու հիմնավորումների վերաբերյալ:

«Պրոթերմ» ՍՊԸ-ն 11.05.2022թ.-ին գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-ին մասի՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Այստեղ օրենսդիրը հստակ մատնանշել է այն անձանց շրջանակը, որոնք օժտված են բողոքարկմանը մասնակցելու իրավասությամբ:

«Պրոթերմ» ՍՊ ընկերությունը մասնակցել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22 ծածկագրով մրցույթին հստակ շահագրգռվածությամբ, որը արտահայտվում է, ինչպես սպասվելիք եկամտով, այնպես էլ գործի օբեկտիվ և բազմակողմանի քննությամբ:

Այսպես՝ ԱՁ Վոլոդիա Բաղդասարյան Արազի կողմից տրված լիազորագիրը կոնկրետ հանձնարարություն չի պարունակել, այլ կերպ ասած՝ 15.04.2022թ. տրված լիազորագրում բացակայել է մրցույթի հայտի փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու լիազորությունը և հստակ չի կոնկրետացվել, թե հայտի ներկայացումը ում լիազորությունների շրջանակում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի (...) վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և

պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի համար (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ըստ էության հանդիսանալով միակողմանի գործարք՝ լիազորագիրը լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝ լիազորողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը, իսկ լիազորողի (պարտատիրոջ) համար սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած հանձնարարությունը (պարտավորությունը) (տե՛ս, Վարդուշ Ղազարյանն ընդդեմ Գևորգ Ղազարյանի թիվ ԼԴ/0423/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը):

Վերոգրյալից բխում է, որ լիազորագիրը հանդիսանում է միակողմանի գործարք և լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝ լիազորողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը: Այսինքն՝ լիազորվողը ստանում է լիազորություն՝ լիազորողի անունից կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են լիազորագրով: Այլ կերպ ասած՝ լիազորվողը օգտվում է լիազորագրի շրջանակներում լիազորողի կողմից իրեն վերապահված գործողություններ կատարելու իրավունքից, որը հստակ ձևակերպվում է լիազորագրի բովանդակությունում և երրորդ անձանց հնարավորություն է տալիս հստակ եզրակացնել, թե լիազոր ներկայացուցիչն ինչպիսի իրավազորությամբ է օժտված: / տե՛ս, Մարինա Հայրապետյանի, Կարեն, Վարդգես, Ինա Եղիազարյանների և Ամալյա Բագրատունու, երրորդ անձ «Արարատ բանկ» ԲԲԸ-ի անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, բնակարանից վտարելու և գումար բռնագանձելու պահանջների մասին, և ըստ Մարինա Հայրապետյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ հիմնական պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/1769/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2018թ. ապրիլի 7-ի որոշումը/:

Տվյալ դեպքում սույն գործով Բողոքներ քննող անձի համար պարզման ենթակա է հետևյալ հարցը՝ լիազորագրով ի՞նչ հանձնարարություն է տրվել և փաստացի ի՞նչ գործողություններ են կատարվել, արդյո՞ք լիազորված անձը կատարել է գործողություններ, որոնց հանձանարարություն վերջինս չի ունեցել:

Հատկանշական է, որ բողոքաբերը չի բողոքարկել պատվիրատուի որոշումը այն պահով, որ օրենքով սահմանված 1 աշխատանքային օրյա ժամկետ չի տրամադրվել:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի՝ Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22 ծածկագրով մրցույթի Հրավերի 4.3 կետի համաձայն ՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակ¬ցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ըտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

2) իր կողմից հաստատված գնային առաջարկ

4) շինարարական աշխատանքների գնման դեպքում՝

- իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել.

- իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները.

5) ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է ենթակապալի միջոցով:

6) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Այսինքն, Գնումների մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի և Հրավերի 4.3-րդ կետի համադրումից հետևում է, թե որոնք են հայտով պահանջվող փաստաթղթերը: Ընդ որում այդ փաստաթղթերի ցանկում ներառված չէ մասնակցի կողմից ներկայացուցչին

տրված լիազորագիրը, ուստի պատվիրատուի գնահատմամբ լիազորագիրը չի հանդիսանում հրավերով պահանջվող /հայտում ներառված/ փաստաթուղթ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 05.05.2017թ. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի /այսուհետ՝ նաև Կարգ/ 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝ Հայտերի բացման և գնահատման նիստում՝հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22 ծածկագրով մրցույթի Հրավերի 8.2 կետի համաձայն՝ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Նշված նորմերի փառացի մեկնաբանությունից էլ հետևում է, որ Կարգի 41-րդ կետով նախատեսված կասեցման հիմքը ծագում է միայն այն դեպքում, երբ հայտում, կամ որ նույնն է՝ հայտով պահանջվող փաստաթղթերում, հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ են արձանագրվում, բացառությամբ այն հայտերի, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Վերոգրյալից ելնելով, պարզ է դառնում, որ լիազորագիրը հրավերի պահանջների շրջանակում հայտով ներկայացվող փաստաթուղթ չէ, հետևաբար այն շտկման ենթակա չէ և նման դեպքերի արձանագրման դեպքում գնահատող հանձնաժողովը ոչ թե պետք է մեկ աշխատանքային օրով կասեցնի նիստը և հնարավորություն ընձեռի մասնակցին շտկել թերությունը, այլ պետք է մերժի հայտը, որն էլ հանձնաժողովի կողմից իրավացիորեն կատարվել է:

Ստացվում է, որ անձը, ով ստորագրել է գնային առաջարկը (հավելված 2) չի ունեցել համապատասխան լիազորություն, իսկ նշվածից էլ հետևում է, որ եթե գնային առաջարկը սխալ է ստորագրված, ապա այն շտկման ենթակակ փաստաթուղթ չէ և պատվիրատուն ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ կրում է մասնակցի հայտը մերժելու ուղղակի պարտավորություն:»:

Ելնելով վերոգրյալից, «Պրոթերմ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է թողնել անփոփոխ 2022թ.-ի ապրիլի 26-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը:

5. <u>ԳԲՔԱ-LO-2022/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ի ՇՊ-3, 4 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին մակերևույթների հակակոռոզիոն

շերտապատում՝ հակադարձ փականներից մինչև թիվ 2 հովացման աշտարակի հորանը» ծառայությունների ձեռքբերման նպատակով 08.04.2022թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 18.04.2022թ.-ին:

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Պրոթերմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից) և «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 26.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի հայտը գնահատվել է անբավարար, քանի որ Մասնակցի մասնակցության հայտի հավելվածներում ստորագրվել է որպես «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ տնօրեն, սակայն համաձայն «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ «Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն...»: Որոշում կայացնելու համար Հանձնաժողովը առաջնորդվել է «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետով և «Գնումների մսին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ Կառավարության առ 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետով սահմանվում է, որ «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»:

iv. Նույն կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, արձանագրել է, որ լիազորագիրը ևս շտկման ենթակա փաստաթուղթ չէ, ինչով պայմանավորված որոշել է «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի հայտը մերժել:

v. Նույն արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Պրոթերմ» ՍՊԸ-ին ճանաչվել ընտրված մասնակից:

vi. www.gnumner.am համացանցային կայքում 27.04.2022թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

vii. «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի կողմից 15.04.2022թ.-ին գնահատող հանձնաժողովին ներկայացված լիազորագրի համաձայն՝ «Սույն լիազորագրով «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ն (ՀՎՀՀ՝ 43194072, Ն/Ք՝ 005817168, իրավաբանական հասցե՝ Կոտայքի մարզ, Պռոշյան 5փ., 18 նրբ., /Տ/7տ.), ի դեմս տնօրեն Վոլոդյա Բաղդասարյանի, լիազորում է Հակոբ Հովհաննեսի Մինասյանին (Ն/Ք՝ 000074195, տրված 26.11.2012թ.-ին 001-ի կողմից) իր անունից փաստաթղթեր ստորագրելու, պայմանագրեր կնքելու, ինչպես նաև կատարելու բոլոր անհրաժեշտ գործողությունները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման համար:»:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի կողմից 29.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող

մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի

ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին: Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում: Լիազորագիրը, որում նշված չէ դրա կատարման տարին, ամիսը և ամսաթիվը, առոչինչ է:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Հրավերի 2.6-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝

լիազորագիրը, հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար: Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցելու դեպքում պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ի ՇՊ-3, 4 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին մակերևույթների հակակոռոզիոն շերտապատում՝ հակադարձ փականներից մինչև թիվ 2 հովացման աշտարակի հորանը» ծառայությունների ձեռքբերման նպատակով 08.04.2022թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀՇՁԲ-17/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի հայտը գնահատվել է անբավարար, քանի որ Մասնակցի մասնակցության հայտի հավելվածներում ստորագրվել է որպես «Վոլոդյա Բաղդասարյան Արազի» Ա/Ձ տնօրեն, սակայն համաձայն «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ «Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեութուն...», ուստի Հանձնաժողովը արձանագրել է, որ լիազորագիրը ևս շտկման ենթակա փաստաթուղթ չէ, ինչով պայմանավորված որոշել է «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի հայտը մերժել, իսկ «Պրոթերմ» ՍՊԸ-ին ճանաչվել ընտրված մասնակից:

«Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի կողմից 15.04.2022թ.-ին գնահատող հանձնաժողովին ներկայացված լիազորագրի համաձայն՝ «Սույն լիազորագրով «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ն (ՀՎՀՀ՝ 43194072, Ն/Ք՝ 005817168, իրավաբանական հասցե՝ Կոտայքի մարզ, Պռոշյան 5փ., 18 նրբ., /Տ/7տ.), ի դեմս տնօրեն Վոլոդյա Բաղդասարյանի, լիազորում է Հակոբ Հովհաննեսի Մինասյանին (Ն/Ք՝ 000074195, տրված 26.11.2012թ.-ին 001-ի կողմից) իր անունից փաստաթղթեր ստորագրելու, պայմանագրեր

կնքելու, ինչպես նաև կատարելու բոլոր անհրաժեշտ գործողությունները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման համար:»:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի կողմից 15.04.2022թ.-ին հանձնաժողովին ներկայացված լիազորագիրը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ այն բովանդակային առումով ելնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ լիազորագրին վերաբերող դրույթներից և չի հակասում վերջիններին: Ներկայացված լիազորագրի բովանդակությունը լիարժեք թույլ է տալիս լիազորված անձին «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի անունից հանդես գալու և ստորագրել (վավերացնել) անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի իրավակարգավորումներից՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերության կողմից ներկայացված 15.04.2022թ.-ի լիազորագիրը, որպես միակողմանի գործարք, համապատասխանում է նաև Օրենսգրքի՝ միակողմանի գործարքների ձևին և բովանդակությանը վերագրվող պահանջներին: Այն կնքված է փաստաթուղթ կազմելու միջոցով, արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի՝ Ա/Ձ-ի կողմից:

Ընդ որում, հարկ է փաստել, որ Կարգով և Հրավերով չեն սահմանվել լիազորագրի ձևի և բովանդակության վերաբերյալ լրացուցիչ պահանջներ, որոնց պետք էր այն համապատասխաներ (որոշակի ձևաթղթի վրա կնքելը և այլն):

Ամփոփելով վերոնշյալները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված լիազորագիրը ներկայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ի ՇՊ-3, 4 շրջանառու պոմպերի մղման խողովակաշարերի ներքին մակերևույթների հակակոռոզիոն շերտապատում՝ հակադարձ փականներից մինչև թիվ 2 հովացման աշտարակի հորանը» ձեռքբերման նպատակով 08.04.2022թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի հայտն անբավարար

գնահատելու և մերժելու մասին որոշում՝ գործել է ոչ իրավաչափ, որպիսի պայմաններում Ընկերության կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ի կողմից 29.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/76 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-17/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 26.04.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումները:
- ընդունել «Վոլոդյա Արազի Բաղդասարյան» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**